# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

2023-2028թթ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ներածություն---------- 3
2. ընդհանուր տեղեկություն դպրոցի մասին---------- 4
3. Ուսումնական հաստատության գործունեությունը---------- 5-14
4. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր---------- 15-29
**4.1** Հաստատության շենքային պայմաններ----------15
**4.2** Հաստատության նյութատեխնիկական բազան----------16
**4.3** Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն---------- 17-18
**4.4** Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների,կրթության կառավարման մարմինների,ծնողական համայնքի,շահառու կազմակերպությունների հետ----------19-21
**4.5** Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ---------- 22-23
**4.6** Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներն ու նորարարություններ---------- 24
**4.7** Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն---------- 25-26
**4.8** Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր---------- 27-28
**4.9** Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն---------- 29
Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը---------- 30-31
5.Հաստատության առկա հիմնախնդիրները---------- 32-34
5-8 բաղադրիչները՝ ներքոնշյալ ոլորտներում
**Ոլորտ 1.** Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան---------- 35-36
**Ոլորտ 2.** Կառավարման և խորհրդակցական մարմիններ----------37
**Ոլորտ 3.** Մանկավարժական համակազմ---------- 38-39
**Ոլորտ 4.** Աշակերտական համակազմ---------- 39-40
**Ոլորտ 5.** Ծնողական համակազմ---------- 41
**Ոլորտ 6.** Համագործակցությունը համայնքի կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ-- 42
**Ոլորտ 7.** Ուսումնական միջավայր ---------- 43
**Ոլորտ 8.** Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների----------44
**Ոլորտ 9.** Տեխնոլոգիաներ և հնարավորություններ---------- 45
**Ոլորտ 10.** Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր---------- 46
9. Ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները---------- 47-55
10. Վերահսկողության մեխանիզմներ---------- 56
11. եզրափակում---------- 57

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց են, որին հասնելու համար պահանջվում է նպատակաուղղված աշխատանք: Անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար: Հաշվի է առնվում այն հանգամանքը, որ դպրոցի հիմնական առաքելությունը հայրենասեր, մարդասեր, մասնագիտական կողմնորոշում ունեցող, տարբեր կարողունակություններով օժտված անձի ձևավորումն է:

Դպրոցի զարգացման ծրագիրը ներառում է 2023-2028թթ. «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման հիմնական ուղղությունները: Ուսումնական հաստատությունը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, դպրոցի կանոնադրությամբ: Դպրոցի ծրագիրն ուղղված է աստիճանական զարգացմանը՝հաշվի առնելով կրթական հաստատության ներուժը, կարիքները:

«Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է: Զարգացման ծրագրի հիմքում ընկած է կարողունակ քաղաքացու ձևավորումը,որը կլինի մրցունակ, կողմնորոշված, 21-րդ դարի քաղաքացի:

barcode

Զարգացման ծրագիրը մշակվել է ՝ հաշվի առնելով դպրոցի կարիքները, հնարավորությունները, դպրոցի մանկավարժական , ծնողական, աշակերտական խորհուրդների կարծիքներն ու առաջարկությունները:

***Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին***

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է` ի դեմս ՀՀ կառավարության:
Դպրոցի հասցեն` ՀՀ Լոռու մարզ ք. Սպիտակ , Այգեստան 53
Հեռախոս `(0255) 2-24-88
Դպրոցի էլեկտրոնային հասցեն` spitak4school@yandexs.ru
Կայքը`spitak4.schoolsite.am
Դպրոցը հիմնադրվել `1955թ, տվյալ շենքում տեղակայվել `1993թ-ին Քուվեյթի հայ համայնքի նվիրատվությամբ:
Դպրոցը նորոգվել է 2005 թ-ին,մարզադահլիճը կառուցվել է `2007թ-ին:
Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է` 2022թ-ին, 2017 թ-ին դպրոցը անցել է ներառական կրթության :
Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորող 1 աշակերտ:
Դպրոցը գործում է 1 մասնաշենք ունեցող հարմարեցված նախագծային շենքում, երկհարկանի է` ձեղնահարկով, ունի լոկալ ջեռուցում: Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր,ունի հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
Դպրոցը միահերթ է, աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով:Դպրոցին կից չի գործում նախակրթարան, դպրոցում չկա անվանակոչված դասասենյակ:
Դպրոցը բավարարում է սովորողի կրթական կարիքները, նախատեսված է 163 աշակերտի համար, ըստ լինցեզիաների`
Տարրական կրթություն - 68 տեղ
Հիմնական կրթություն- 95 տեղ

Դպրոցը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում (վկայական 03Ա056856/23.01.2003թ/)

# Ուսումնական հաստատության գործունեությունը

Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոցը լինցենզիաների հիման վրա իրականացնում է տարրական, հիմնական հանրակրթական ծրագրերը: Օրինակելի ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, ուսուցչի ձեռնարկներն ու ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված դասագրքերը հիմք են կրթական ծրագրերի իրականացման համար, որը վերահսկվում է: Ծրագրերի ավարտին կատարվում է չափորոշչային պահանջին համապատասխան սովորողների գիտելիքների ,կարողությունների ստուգում:
Խորհրդակցական ձայնի իրավունքով դպրոցի տնօրենը մասնակցում է կառավարման խորհրդի նիստերին: Դպրոցի զարգացման ծրագիրը վերահսկվում է: Վերահսկողություն է իրականացվում դասավանդման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, դպրոցական, արտադպրոցական աշխատանքների կազմակերպման շրջանակներում:Տնօրենության կողմից հսկվում է կառուցվածքային ստորաբաժանումների,մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքները:
Ուսհաստատությունում կա բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ,համագործակցություն:
Իրականացվում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը:
Ապահովված է սանիտարահիգիենիկ վիճակի,աշխատանքի անվտանգության պահպանման կանոնները:Ուստարվա պարապմունքներին ընդառաջ կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, ներքին գնահատում.մինչև սեպտեմբերի 5-ը: ուսուցումն իրականացվում է գրական հայերենով,պետական չափորոշչի ,առարկայական չափորոշչի և ծրագրերի բովանդակության պարտադիր յուրացմամբ: Կան սկզբունքներ,որոնցով առաջնորդվում են դպրոցում.

- ժողովրդավարություն
- մարդասիրություն,ներառականություն
- բազմակողմանի զարգացում
- առողջության,անվտանգության պահպանում
- ազգային- մշակութային ,համամարդկային արժեքների պահպանում և զարգացում:

Ուսուցման նոր մեթոդներն ու ձևերը աստիճանաբար կիրառելի դարձան վերջին տարիների ընթացքում:Մանկավարժները մասնագիտական կատարելագործման համար վերապատրաստվում են,ատեստավորվում: Մանկավարժական աշխատողները համագործակցում են միմյանց հետ:Նոր ուստարվանից դպրոցը կանցնի երկարօրյա ուսուցման կազմակերպման:
Սովորողների համար կազմակերպվում են ուսուցման,դաստիարակության, հանգստի միջոցառումներ:Դպրոցն ապահովում է ԿԱՊԿՈՒ երեխաների սովորելու իրավունքը,ինչպես նաև առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ:

Աշխատանքներ են տարվում սովորողների վարքի, վարվեցողության կանոնների ապահովման ուղղությամբ:
Դպրոցը անմասն չի մնում համայնքային, մարզային, հանրապետական միջոցառումներից:
Համայնքի կարիքներին համապատասխան ՝ դպրոցի սաներն իրականացրել են նախագծային աշխատանք:
Համայնքի կրթական ծրագրերի իրականացմանը դպրոցն ունի իր մասնակցությունը: Կարևորվում է նաև կառավարման,խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետությունը:Ազդեցությունը դպրոցի զարգացման վրա տարբեր են՝ կախված համայնքի սոցիալ-տնտեսական վիճակից,մասնակցային ղեկավարման հմտությունից,խորհրդի անդամների ակտիվությունից:
Դպրոցում ուստարվա ընթացքում կառավարումն իրականացվում է հաստատության զարգացման ծրագրին համապատասխան: Ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական աշխատանքները կազմակերպվում են ՀՀ օրենսդրության,դպրոցի կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:
Ուստարվա ընթացքում հրավիրվում և կազմակորպվում են հերթական, արտահերթ նիստեր,ժողովներ:
Դպրոցը համարվում է սոցիալ-մշակութային կենտրոն: Արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին իր մասնակցությամբ դպրոցը լայն գործունեություն է ծավալում: Կազմակերպվում են այցելություններ արտադրամասեր, մշակութային կենտրոններ, մասնակցում համայնքային, մարզային, հանրապետական մարզական,մշակութային մրցույթների, առարկայական օլիմպիադաների: Սոցիալական աջակցության ծրագրերից օգտվում են դպրոցի սովորողները:
Դպրոցում իրականացվում են բազմաբովանդակ միջոցառումներ, այն միտված է պետականության դերի գիտակցական,հայրենասիրական,քաղաքացիական,էկոլոգիական ուսուցման կայուն զարգացմանը:Սովորողների համար ստեղծված են պայմաններ.ապահովված են դասագրքերով,ուսումնաօժանդակ գրականությամբ,լաբորատորիայում կատարվում են փորձեր, կազմակերպվում են բաց դասեր, ֆիլմերի դիտում,քննարկումներ, վիկտորինաներ: Արմաթ ինժեներական լաբորատորիա հաճախում են դպրոցի 12 սաներ, ստանում գիտելիք,ստեղծում խաղեր,մասնակցում մրցույթների:Ծնողները ներգրավված են երեխաների կրթության, հանգստի կազմակերպման գործում, սակայն ուսումնական որակի , ձեռքբերումների հարցում քիչ մասնակցություն ունեն:
Ուսուցողական հանդիպումներ են կազմակերպվում անվտանգ կենսագործունեության, արտակարգ իրավիճակներում դրսևորվելու, կանոններին տիրապետելու, վարժանքների իրականացում՝ մասնագետների օժանդակությամբ:
Դպրոցն իրականացնում է նաև այլ կարևոր գործունեություն. գնումների գործընթացի կազմակերպում,հաշվապահական հաշվառում, սննդի կազմակերպում, սանիտարահիգիենիկ վիճակի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում:
Վերոնշյալ գործողություններից ելնելով կարող ենք ասել, որ դպրոցը իրականացնում է իր գործունեությունը՝ ապահովվելով ժողովրդավարական սկզբունքները, իրականացնելով ներառական, մասնակցային կրթությունը՝ շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:

***Մարդկային ռեսուրսներ***
<u>Վարչական աշխատողներ-3</u>

<u>Մանկավարժական աշխատողներ</u>
Վերապատրաստում անցած, ատեստավորված -17
Համատեղությամբ աշխատող -3
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող-16
Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող-1
Լաբորանտ -1
Գրադարանավար -1
Ուսուցչի օգնական-1
Հոգեբան -1
Դակ – 1
Զինղեկ-1
*<u>Առարկայական մեթոդմիավորում-4</u> (հումանիտար,բնագիտական,տարրական,ընդհանուր*

<u>Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ</u>
Վարչատնտեսական մասի համակարգող-1
Հաշվապահ-1 հավաքարար-2
Գործավար-1 պահակ-3
Օպերատոր-1
Խոհարար-1 հնոցապան-3(ջեռուցման ժամանակահատվածում)
Ընթացիկ վերանորոգման բանվոր-1

***Դպրոցի խորհրդակցական մարմինները*** ***կառավարման խորհուրդ -9 անդամ***

- Մանկավարժական խորհուրդ- ընդգրկված են բոլոր մանկավարժները
- Ծնողական խորհուրդ -9 անդամ
- Աշակերտական խորհուրդ -8 սովորող

Յուրաքանչյուրը գործում է օրենքով, կանոնադրությամբ՝ իր իրավասությունների սահմաններում:

*2023-2024 ուստարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, տարրական դպրոցում՝ 4 դասարան, միջին դպրոցում՝ 5 դասարան:*

| **Դասարան** | **1-ին դաս.** | **2-րդ դաս.** | **3-րդ դաս.** | **4-րդ դաս.** | **5-րդ դաս.** | **6-րդ դաս.** | **7-րդ դաս.** | **8-րդ դաս.** | **9-րդ դաս.** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվ | 16 | 12 | 16 | 15 | 14 | 9 | 13 | 16 | 9 |

*2022-2023 ուստարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, տարրական դպրոցում՝ 4 դասարան, միջին դպրոցում՝ 5 դասարան:*

| **Դասարան** | **1-ին դաս.** | **2-րդ դաս.** | **3-րդ դաս.** | **4-րդ դաս.** | **5-րդ դաս.** | **6-րդ դաս.** | **7-րդ դաս.** | **8-րդ դաս.** | **9-րդ դաս.** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվ | 13 | 16 | 14 | 14 | 8 | 9 | 14 | 9 | 13 |

*2022-2023 ուստարվա հիմնական դպրոցն ավարտածների կրթության շարունակականությունը:*

| **Կրթական հաստատություն** | **Ավագ դպրոց** | **Քոլեջ** | **ուսումնարան** | **Ֆիզմաթ դպրոց** |
|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվը | 7 | 3 | 2 | 1 |

*2021-2022 ուստարվա հիմնական դպրոցն ավարտածների կրթության շարունակականությունը:*

| **Կրթական հաստատություն** | **Ավագ դպրոց** | **Քոլեջ** | **ուսումնարան** | **Ֆիզմաթ դպրոց** |
|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվը | 8 | 2 | 5 | - |

## Սովորողների առաջադիմություն




| | 2018-2019 | 2019-2020 | 2020-2022 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| գերազանց | 23 | 24 | 28 | 25 | 29 |
| լավ | 40 | 31 | 32 | 35 | 35 |
| բավարար | 55 | 65 | 53 | 53 | 46 |

## Գերազանցության նմուշի վկայական ստացողների թիվն ըստ տարիների



# Հաստիքացուցակը

| Պաշտոններ | Հաստիքի թիվը | |
|---|---|---|
| | 2022-2023 | 2023-2024 |
| Վարչական աշխատողներ | 2 | 3 |
| Ուսուցիչներ | 12,4 | 12,4 |
| Մանկավարժական հաստիք | 4,5 | 5 |
| Հաշվապահ | 1 | 1 |
| Ուսումնաօժանդակ աշխատողներ | 8,25 | 10,3 |

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը 6,47%

| Ուսուցիչների տարիքային կազմ | Մինչև 30 տարեկան | 31-40 տարեկան | 40-50 տարեկան | 51-60 տարեկան | 61+ տարեկան |
|---|---|---|---|---|---|
| | 3 | 3 | 5 | 5 | 1 |

## Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը

| Ուստարի | Ուսուցիչներ ընդհանուր թիվ | ծանրաբեռնվածություն |
|---|---|---|
| 2019-2020 | 19 | 14,32 |
| 2020-2021 | 17 | 16 |
| 2021-2022 | 17 | 16 |
| 2022-2023 | 17 | 16 |

## Ուսուցիչների թիվն ըստ աշխատանքային փորձի

| | 1-5 տարի | 6-15 տարի | 16 ավել տարի |
|---|---|---|---|
| Ուսուցիչների թիվը | 4 | 1 | 12 |

## *Դպրոցի հնարավորությունները, ենթակառուցվածքները*

| Շենքային պայմաններ | քանակը | Մակերես / մ² | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Տնօրենի կաբինետ | 1 | 15 | Լավ |
| Ուսուցչանոց | 1 | 35 | Լավ |
| Դասասենյակներ | 9 | 31,5(յուր) | Բավ. |
| Հոգեբանի սենյակ | 1 | 15 | Բավ. |
| Առարկայական սենյակներ | 3 | 15,15,20 | Բավ. |
| ՆԶՊ դասասենյակ | 1 | 30 | Լավ |
| Զինասենյակ | 1 | 6 | Լավ |
| «ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիա | 1 | 30 | Գեր. |
| Լաբորատորիա | 1 | 18 | Բավ. |
| Համակարգչային սենյակ | 1 | 32 | Բավ. |

| | | | |
|---|---|---|---|
| Հաշվապահի սենյակ | 1 | 15 | Բավ. |
| Ճաշարան | 1 | 45 | Գեր |
| Խոհանոց | 1 | 10 | Գեր |
| Բուժկետ | 1 | 10 | Բավ. |
| Գրադարան | 1 | 30 | Բավ. |
| Արհեստանոց | 1 | 39 | Բավ. |
| Մարզադահլիճ | 1 | 216 | Բավ. |
| Հանդերձասրահ | 2 | 10/10 | Բավ. |
| Սանհանգույց/աղջ.,տղ./ | 4/4 | 22 | Բավ. |
| Պահակակետ | 1 | 6 | Բավ. |
| Կաթսայատուն | 1 | 32 | Բավ. |
| Պահեստ/սննդի/ | 1 | 18 | Բավ. |

## *Գույք, սարքավորումներ*

| Անվանումը | Քանակ/ հատ | Փաստացի վիճակը |
|---|---|---|
| DVD նվագարկիչ | 1 | Լավ |
| XEROX սարք | 2 | Լավ |
| Աշակերտական աթոռ | 315 | Բավ. |
| UPS | 5 | Բավ. |
| Բազմոց | 2 | Բավ. |
| Գրապահարան | 2 | Բավ. |
| Գրատախտակ | 16 | Բավ. |
| Գրադարանի գեղարվեստական գրքեր | 1750 | Լավ/բավ. |
| Դաշնամուր | 1 | Բավ. |
| Դարակաշար միակողմ գրադարանի համար | 2 | Բավ. |
| Էլեկտրական սալօջախ | 1 | Լավ |
| Էլեկտրական վառարան | 1 | Լավ |
| Թենիսի սեղան | 1 | Լավ |

| | | |
|---|---|---|
| Լվացարան | 6 | Բավ. |
| Լվացարան 2տեղանի | 1 | Լավ |
| Խաղային քառակուսի սեղան | 4 | Լավ |
| Խոհանոցային մետաղյա դարակաշար | 2 | Գեր. |
| Խոհանոցային սեղան | 1 | Լավ |
| Կամրջակ | 2 | Բավ. |
| Կշեռք | 1 | Լավ |
| Կրակմարիչ | 2 | Բավ. |
| Հագուստի մանկական պահարան | 4 | Լավ |
| Հակահրդեհային վահանակ | 1 | Բավ. |
| Համակարգիչ | 11 | Լավ/բավ. |
| Հայտարարությունների տախտակ | 1 | Բավ. |
| Հեռուստացույց | 2 | Բավ. |
| դրոշ | 1 | Լավ |
| մարզանստարան | 2 | Բավ. |

| | | |
|---|---|---|
| Մարզապատ | 5 | Բավ. |
| Մեծ այծիկ | 1 | Բավ. |
| Շախմատի աթոռ | 12 | Լավ |
| Շախմատի սեղան | 4 | Բավ. |
| Ուսուցչի աթոռ | 12 | Բավ. |
| Ուսուցչի սեղան | 18 | Բավ. |
| Չիրկիզվող պահարան | 1 | Լավ |
| Պահարան | 8 | Բավ. |
| Քիմիական ապակեղենի պահարան | 1 | Բավ. |
| Պահարան առաջին օգնության դեղամիջոցների | 1 | Բավ. |
| Պատի հայելի | 2 | Բավ. |
| Պլանշետ | 49 | Լավ |
| Ջրատաքացուցիչ | 1 | Լավ |
| Սառնարան | 1 | Գեր. |
| Սեղան տնօրենի կաբինետի | 1 | Լավ |

| | | |
|---|---|---|
| Սկաներ | 2 | Բավ. |
| Սպասքի ընդունման սեղան | 1 | Լավ |
| Տեսապրոյեկտոր | 1 | Բավ. |
| Տպիչ | 3 | Բավ. |
| Ցուցադրական սեղան ֆիզիկայի | 1 | Լավ |
| Ցուցադրական սեղան ՆԶՊ | 1 | Լավ |
| Զանգահարող սարք | 1 | Բավ. |
| Լաբորատոր գույք | 2 | Բավ . |

# 2. Իրավիճակի վերլուծություն.ուժեղ և թույլ կողմեր

## Հաստատության շենքային պայմանները

### ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- ✓ Դպրոցը երկհարկանի քարե շինություն է
- ✓ ունի տնօրենի կաբինետ
- ✓ ուսուցչանոց
- ✓ դասասենյակներ
- ✓ հոգեբանի սենյակ
- ✓ շախմատի դասասենյակ
- ✓ ՆԶՊ  դասասենյակ, զինասենյակ
- ✓ «ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիա
- ✓ ԲՏՃՄՆ լաբորատորիա
- ✓ համակարգչային սենյակ
- ✓ հաշվապահի սենյակ
- ✓ ճաշարան, խոհանոց
- ✓ գրադարան
- ✓ մարզադահլիճ
- ✓ սանհանգույց՝ աղջիկների, տղաների համար
- ✓ պահակակետ,կաթսայատուն, պահեստ,տնտեսվարի կաբինետ
- ✓ դպրոցի տարածքը առանձնացված է ցանկապատով,ասֆալտապատ է
- ✓ դպրոցի շենքի մուտքի մոտ առկա է թեքահարթակ
- ✓ դպրոցում  պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը
- ✓ դպրոցն ունի լրկալ ջեռուցման համակարգ, եռաֆազ հոսանք
- ✓ դպրոցն ունի տարհանման ելքեր

### ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Հարմարեցված նախագծային շենք է:
- Չկան տեսախցիկներ:
- Դպրոցի տարածքը ապահովված չէ ջրահեռացման համակարգով:
- Դպրոցը չունի ապաստարան:
- Բակը ունի կանաչապատման կարիք:
- Դպրոցը չունի նիստերի դահլիճ:
- Դահլիճը և մարզադահլիճը գտնվում են ոչ բարվոք վիճակում:
- Չկան անվանակոչված դասասենյակներ:
- Դպրոցը չունի SMART սենյակ:
- Առարկայական դասասենյակների անբավարար քանակ:
- Դասասենյակների պատուհանները և դռները փոխված չեն:
- Դպրոցը չունի նկուղ:
- Դպրոցն ունի վերանորոգման կարիք:
- Դպրոցը չունի ուսուցչի օգնականի սենյակ:
- Դպրոցը չունի նիստերի դահլիճ:
- Ֆուտբոլի դաշտը կանաչապատված չէ:

# *Հաստատության նյութատեխնիկական բազան*

## Ուժեղ կողմեր

Դպրոցում գործում է ԱՐՄԱԹ լաբորատորիա՝ նոր գույքով: Ձեռք է բերվել ճաշարանի գույք,սպասք: Խոհանոցում կան սառնարան, գազօջախ, կշեռք, դարակաշար : Ճաշարանը վերանորոգված է:
Դպրոցն ունի համակարգիչների սենյակ, նախարարության կողմից տրամադրվել է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության կաբինետների որոշակի քանակությամբ գույք:
Դպրոցն ունի մարզագույք (քիչ քանակությամբ):
Ապահովված է պլանշետներով, գեղարվեստական գրականության մեծ պաշար /1750գիրք/: Մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ կան:

## Թույլ կողմեր

- Դպրոցը չունի ժամանակակից կահավորմամբ դասասենյակներ, աշակերտական նոր գույք՝ սեղան-աթոռներ, նոր գրատախտակներ, դահլիճի աթոռներ, ԲՏճՄ կաբինատների անհրաժեշտ սարքավորումներ, փորձանյութեր, քարտեզներ, մանկական գրականություն, գրադարանի համար ամսագրերի սեղան, սեկցիա՝ քարտեզների համար, ուսումնացուցադրական ձեռնարկների պահարաններ:
- Դպրոցը կարիք ունի համակարգչային սեղան- աթոռների, սեղան ավազաթերապիայի, կարի մեքենաների, երաժշտական գործիքների, ամբիոնի, խոսափողների:
- Դպրոցը չունի մարզագույք, ռեսուրս սենյակ, դիդակտիկ պարագաներ, հոգեբանի սենյակին համապատասխան գույք:

# Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

## Ուժեղ կողմերը

- Հիմնադիրը , ՀՀԿԳՄՍ նախարարությունը, լիազորված մարմինը իրականացնում են իրենց աշխատանքները համակարգված և նպատակային:
- Ուսհաստատության կառավարման մարմինը՝ խորհուրդը, ձևավորվել է
- կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով՝ կազմը 9 անդամ:
- Նիստերը գումարվում են սահմանված ժամկետում և օրակարգով, հրավիրվում է նաև արտահերթ նիստեր: ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից 2022 թ-ին կազմակերպած խորհրդի անդամների վերապատրաստման դասընթացին մասնակցել են 4 անդամ: խորհրդի նիստերը կազմակերպելու համար տնօրենը առանձնացնում է աշխատասենյակ, փաստաթղթերի համար կա չհրկիզվող պահարան: Խորհրդի նախագահը նիստի որոշումները տրամադրում է հաստատության տնօրենին, տնօրենը նիստերի որոշումները հրապարակում է:
- Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ներկա են գտնվում կառավարման խորհրդի անդամներ:
- Կառավարման խորհուրդը տարեկան քննարկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարողականները:
- Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը ներկայացնում է կառավարման խորհրդին:
- Տնօրենը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, փոխտնօրենների դասղեկների, առարկայական մեթոդմիավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները ներկայացնում է հավանության կառավարման խորհրդի, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը և դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:

## Թույլ կողմերը

- Տնօրենի և կառավարման խորհրդի անդամների կողմից ներկայացված նախագծերը քիչ են:
- Անցած ուստարիների հաջողությունների ,թերությունների ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ քննարկումները, առաջարկությունները քիչ են:
- Կառավարման խորհրդի ոչ բոլոր անդամներն են վերապատրաստվել և անհրաժեշտ պատրաստվածություն չունեն կրթական նորամուծությունների, ՀՊՉ-ի վերաբերյալ՝ աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար:
- Ծնողխորհրդի, մակխորհրդի կողմից դպրոցի կառավարման խորհրդի աշխատանքներին մասնակցության պասիվություն է նկատվում. չկան նախաձեռնություններ, առաջարկներ, քննարկումներ:

- Տնօրենի ներկայացմամբ քննարկվում է հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաձորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը:
- Տնօրենի ներկայացմամբ քննարկվում է հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաձորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը:
- Կառավարման մարմնի կողմից հաստատվում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները:
- Արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերլուծություն կատարվում է տնօրենի հետ համատեղ:
- Խորհրդի անդամները պատրաստակամորեն մասնակցում են նիստերին:

## *Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների,կրթության կառավարման մարմինների,ծնողական համայնքի,շահառու կազմակերպությունների հետ*

**Ուժեղ կողմեր**

- Դպրոցի և համայնքի կապը նկատելի է. դպրոցական միջոցառումների ժամանակ մասնակցում են համայնքից ներկայացուցիչներ (պետական տոներ,հիշատակության, եկեղեցական տոներ, Գիտելիքի օր, Վերջին դաս ):
- Քաղաքային, մարզային բնապահպանական ծրագրերին դպրոցը մասնակից է դառնում, ներգրավված է քաղաքային , հանրապետական շաբաթօրյակներին:
- Սովորողները ակտիվ մասնակցում են դպրոցական, քաղաքային, մարզային սպորտային միջոցառումներին, արժանանում պատվավոր մրցանակների:
- Դպրոցը համագործակցում է Սպիտակի ՔԴԿ-ի հետ:
- Դպրոցի սաները հաճախում են « Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, Սպիտակի մշակույթի պալատ՝ տարբեր խմբակներ, օգտվում են քաղաքային գրադարանից:
- Սպիտակի երաժշտական դպրոցի և նկարչական դպրոցի ուսանող են մեր աշակերտները, մասնակցել են տարբեր փառատոների, ճանաչվել հաղթողներ, կազմակերպվել են մենահամերգներ և ցուցահանդեսներ:
- Սպիտակի ԹՈՒՄՈ կենտրոնը, ԵՄՔԱ-ն սովորողների համար ուսումնական զարգացնող անկյուն է:
- Դպրոցը մասնակցում է Սպիտակի Սուրբ Հարություն եկեղեցու հոգևոր- մշակութային միջոցառումներին:

**Թույլ կողմեր**

- Դպրոցը չի համագործակցում արտերկրի հայկական դպրոցների հետ,սովորողների փոխանակման ծրագրերին չի մասնակցում, դպրոցը չունի շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդ:
- ՀԿ-ների հետ կապը թույլ է:
- Դպրոցի աշխորհուրդը չի համագործակցում ուսումնական այլ հաստատությունների հետ:
- Ծնողական համայնքը նախաձեռնող չէ, ծնող-մասնագետները չեն կիսվում իրենց փորձով ծնողական ժողովների ժամանակ սեմինար-դասախոսություններով:
- Ծնողների ներուժը քիչ է օգտագործվում դպրոցում;
- Դպրոցի գրանցած հաջողությունները հավուր պատշաճի չի հանրայնացվում:
- Դպրոցի շրջանավարտների հետ հանդիպումներ չի կազմակերպվում:
- Դպրոցում երկարօրյա ուսուցում չի կազմակերպվել, խմբակների թիվը՝ քիչ:
- Ծնողական համայնքը ավելի հետևողական է միայն տարրական օղակում:
- Ծնողները մասնակիորեն իրազեկված չեն չափորոշչային պահանջներին:

- Եվրոմիության և համայնքապետարանի աջակցությամբ դպրոցի սովորողները կատարեցին նախագծային աշխատանք. բարեկարգվեց պատմամշակութային հուշարձան հանդիսացող կամուրջը:
- Դպրոցը համագործակցում է Էյ Թի Փի էկոակումբի հետ:
- Դպրոցը կազմակերպում է զրույցներ, հանդիպումներ, իրականացնում է գործնական աշխատանքներ ԱԻՆ –ի, ՊՆ-ի, Սպիտակի ԲԿ- Ի , Ոստիկանության Սպիտակի բաժնի հետ:
- Սովորողների այցելություններ է կազմակերպվում Սպիտակում գործող արտադրամասեր:
- Հրավիրվում են համադպրոցական, դասարանական ժողովներ, հաշվի են առնվում ծնողների առաջարկություններն ու բարձրացրած հարցերը:
- Ծնողները մասնակցում են դպրոցական , արտադպրոցական միջոցառումներին, աջակցում ուսուցիչներին:
- Ծնողները ներգրավված են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, իրականացնում են կազմակերպչական աշխատանքներ:
- Դպրոցը խրախուսում է ծնողին՝ երեխայի առաջադիմության, վարքի համար:
- Ծնողին է ներկայացվում ուսհաստատությունում ներկայացվող կրթական ծրագրերը, դպրոցի որակն ու առաջադիմությունը:

Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ՝

- ✓ Դպրոցի առանձին ուսուցիչներ ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի են մասնակցում:
- ✓ Ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ, կառավարման խորհրդի անդամներ մասնակցում են վերապատրաստման դասընթացների:

- ✓ Հոգեբանի, ուսուցչի օգնականի մասնակցությունը ՏՄԱԿ-ի կողմից սեմինար-դասընթացներին:
- ✓ ՏՄԱԿ-ը դպրոցում իրականացնում է աշխատանք ԿԱՊԿՈՒ սովորողի հետ:
- ✓ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից տրվել են հավաստագրեր

- ԳԹԿ-ն դպրոցում իրականացնում է արտաքին գնահատում, 9-րդ դասարանի ավարտական քննություններ:
- ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ այցելություններ թատրոն, համերգասրահներ, թանգարաններ:
- Լոռու մարզպետարանի և Սպիտակի Կրթության բաժնի հետ համատեղ կազմակերպվում է սովորողների դաստիարակության, հանգստի կազմակերպում առողջարական ճամբարներում :
- Երկարօրյա ուսուցման կազմակերպումը դպրոցում
- Հիմնական դպրոցն ավարտելուց հետո դպրոցի սաները շարունակում են կրթությունը ավագ դպրոցում, քոլեջներում, ուսումնարաններում:
- Դպրոցի շրջանավարտներից շատերն այսօր բարձրակարգ մասնագետներ են տարբեր ոլորտներում ( բժիշկներ, տնտեսագետներ, լրագրողներ, իրավաբաններ,տնօրեններ,քաղաքապետ,մանկավարժներ,գյուղատնտես...)
- Դպրոցի 8-9 րդ դասարանների սովորողների հետ կազմակերպվում են հանդիպումներ տարբեր ուսհաստատությունների մասնագետների հետ՝ մասնագիտական կողմնորոշման համար:

## *Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը*

### Ուժեղ կողմեր

- Դպրոցի մանկավարժները ունեն բարձրագույն կրթություն, բացառությամբ մեկի:Մասնակցում են վերապատրաստումների, սեմինարների, ունեն համապատասխան հավաստագրեր,վկայականներ:Դպրոցում անցկացվում են ռազմահայրենասիրական միջոցառումներ , բաց դասեր:Մանկավարժները հետաքրքրված են կրթության զարգացման նորարարություններով , մասնակցում են ԿԶՆԱԿ-ի կողմից հայտարարված մրցույթների . «Պատմաբանի օր» նախագծային աշխատանքի, «Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված օլիմպիադային, «Յոթը սարի ետևում» մրցույթ-փառատոնին ,որի արդյունքում ստացվել է գիտական-հետազոտական աշխատանք /2020թ/.:
- Բոլոր մանկավարժները դպրոցի մանկխորհրդի անդամ են:
- Մանկավարժական աշխատողներն իրենց պարտականություններին ծանոթ են, իրենց պլաններով առաջնորդվում են , նիստերի ժամանակ կատարվում են փոխադարձ լսումներ,քննարկումներ, լինում են փորձի փոխանակում , դասալսումներ:Մասնակցություն ունեն նաև մեդիագրագիտության հեռավար դասընթացների:Տնօրենի կողմից շնորհակալագրերը հանդիսանում են որպես մանկավարժի խրախուսման, ոգևորման միջոց,որը կարող է որակների զարգացման խթան լինել:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում են անցնում իրենց վերապատրաստումները:
- Ուսուցիչները ատեստավորվում են ըստ գրաֆիկի;
- Օգտվում են կրթական տարբեր հարթակներից:

### Թույլ կողմեր

- ՏՀՏ գործիքներին լիարժեք չեն տիրապետում:
- Կամավոր ատեստավորման մասնակից ՝ մեկ ուսուցիչ:
- Դպրոցում չկան տարակարգ ստացած ուսուցիչներ:
- Գնահատման ռուբրիկներ չեն օգտագործվում:
- Թվային առցանց առաջադրանքներ քիչ են ստեղծում:
- Չեն մասնակցում «Տարվա լավագույնները» մրցույթին:

- Մանկավարժական աշխատողների մասնագիտական որակները համապատասխանում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
- Դպրոցի հոգեբան ու ուսուցի օգնականը ևս մասնակցել են վերապատրաստման դասընթացի, ծանոթացել չափորոշչային պահանջների, նոր մեթոդների:
- Լաբորանտն ունի բարձրագույն կրթություն մանկավարժական աշխատանքային ստաժ, կանոնակարգված կատարում է իր աշխատանքը:
- գրադարանավարն ու ՆԶՊ ուսուցիչը աշխատանքային պլաններով կազմակերպում են բազմաբովանդակ միջոցառումներ՝ հայրենասիրական , ճանաչողական, վիկտորինաներ, բաց դասեր, մրցույթներ:
  Շախմատի ուսուցիչը ևս վերապատրաստված է որի սաները շախմատի քաղաքային մարզային մրցաշարերում հասել են հաջողությունների:
- Դպրոցում դասավանդում են բարձրագույն մանկավարժական կրթություն և համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչներ:

- Ուսուցիչների կողմից իրականացվում է նախագծային աշխատանք:
- Իրականացվում է երկարօրյա ուսուցում:
- «Առողջ ապրելակերպ» խմբակը պարապում է վերապատրաստված ուսուցիչը

## *Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներն ու նորարարությունները*

### Ուժեղ կողմեր

- Համակարգչային դասասենյակի և ինտերնետի առկայություն:
- Դպրոցում գործող ԱՐՄԱԹ լաբորատորիա .հաճախում է 10 սովորող
- Դպրոցն ունի պլանշետներ ,կազմակերպվել են հեռավար դասընթացներ:
- Teams հարթակը օգտագործում են ուսուցիչները : «Աշխարհացույց» գործիքը օգտագործում է պատմության ուսուցիչը:
- Ուսուցիչների մեծ մասն օգտվում են ԿԳՄՍ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոկից:
- Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարինների հետ:
- Մանկավարժական, վարչական, աշակերտական համակազմերը օգտվում են և օգտագործում են ՏՀՏ առցանց գործիքների հայալեզու պատրաստի նյութերից. Teams, e-school.am , lib.armedu.am, khanacademy.am:
- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորվում է ուսումնական գործընթացի արդյունավետ աշխատանքը:
- Իրականացվում և ապահովվում է գնումների գործընթացի կազմակերպումը:
- Իրականացվում է հաշվապահական հաշվետվություններ:
- Դպրոցում կազմակերպվում և անցկացվում է թափուր տեղի համար մրցույթներ:
- Մենթոր դպրոցի կողմից իրականացվող սեմինար-քննարկումներին մասնակ-ցում են վարչական աշխատողները:
- Իրականացվում են փոխադարձ դասալսումներ:

### Թույլ կողմեր

- Կա համակարգիչների պակաս:
- Նորագույն սարքավորումների բացակայություն, ԲՏճՄ առարկաների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումների բացակայություն:
- SMART դասասենյակի բացակայություն:
- Ինտերակտիվ գրատախտակի բացակայություն:
- Առցանաց կրթական ցանցերի գործիքներից և դրանց միջոցով շատ քիչ է կազմակերպվում ուսումնական գործընթաց:

## *Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն*

### Ուժեղ կողմեր

- Առկա են առարկայական ծրագրեր, կազմված են թեմատիկ պլաններ (թղթային և էլեկտրոնային տարբերակներով):
- Կատարվում է միավորային և ոչ միավորային գնահատում:
- Դպրոցն իրականացնում է նպատակաուղղված, հավասարապես հասանելի, ներառական կրթություն:
- Գրադարանը հագեցած է գրքերով, բոլոր սովորողներն ունեն դասագրքեր:
- Համակարգչային կաբինետը գործում է:
- Տրվում են հայտորոշիչ գրավորներ. անբավարար արդյունք չի գրանցվում:
- Սովորողների տարեկան (ամփոփիչ) գնահատականները հիմնականում համընկնում են գրավոր աշխատանքների հետ:
- Առարկայական օլիմպիադաների տարածքային փուլում մասնակիցների թիվը 20 և ավելի (2022-2023)
  մարզային փուլ՝ բնագիտական առարկաներից 5 սովորող(2021-2022թթ): 7 սովորող (2022-2023թթ)
  հանրապետական փուլ 1 սովորող (2022-2023):
- Վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննություններից անբավարար գնահատական ստացողներ չեն եղել:
- Մանկավարժները մասնակցում են կրթական ծրագրերի:
- Կառավարման խորհրդի կողմից կատարվում է վերահսկողություն ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ:
- Հաշվի են առնվում սովորողի անհատական կարիքները:
- Բացակայությունների թիվը չի գերազանցում 120-200 ժամը:

### Թույլ կողմեր

- Համակարգիչները հին սերնդի են:
- Էլեկտրոնային դասեր քիչ են անցկացվում:
- Լաբորատորիան արդյունավետ չի գործում, կա գույքի պակաս
- Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների համար լաբորատորիան մեկտեղված է:
- Դպրոցում չկա ընթերցասրահ:
- Մարզադահլիճն իր գույքով չի բավարարում բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար:
- Ուսումնամեթոդական նյութերը քիչ են:
- Շնորհալի, ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերման համար տարվող աշխատանքները քիչ են:
- Ուսուցիչները գիտամանկավարժական հոդվածներ չունեն գրած, համաժողովների, կոնֆերանսների չեն մասնակցում:
- Սովորողի կարողունակությունները շատ ավելի քիչ են, քան ստացած միավորային գնահատականը:
- ԿԱՊԿՈՒ սովորողի կրթության համար անհրաժեշտ, խելամիտ հարմարեցումների բացակայություն:
- Սովորողները չեն նախաձեռնում, պլանավորում, իրականացնում բնապահպանական ծրագրեր:

- ՀՊՉ պահանջներով պայմանավորված ոչ միավորային գնահատում իրականացվում է երկրորդ դասարանում, նախագծային աշխատանք՝ 7-րդ դասարանում, «Առողջ ապրելակերպ» խմբակը՝ 5-րդ, 7-րդ դասարաններում:Կատարվում է հայտորոշիչ ,մնացորդային  գիտելիքների ստուգում,դասալսումներ,ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից հաճախակի կազմակերպվում են սեմինարներ,խորհրդատվություն,տրամադրվում են օժանդակ նյութեր,գրականություն:Պլանավորվում է երկարօրյա ուսուցման կազմակերպումը:

## *Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր*

### Ուժեղ կողմեր

- Դպրոցում սովորում են սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաներ:
- Դպրոցում սովորում է ԿԱՊԿՈՒ երեխա:
- Դպրոցում հաշվի են առնվում աշակերտական, մանկավարժական համակազմի, ուսումնաօժանդակ աշխատողների կարծիքները:
- Ուսուցիչները հնարավորություն ունեն ինքնակազմակերպվելու:
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները օգտվում են դասագրքերի վարձավճարների զեղչերից:
- Բազմամասնագիտական խումբ է աշխատում դպրոցում:
- Ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների սովորողների հետ հաճախ են աշխատում դասղեկը, հոգեբանը, ուսուցչի օգնականը:
- Փոխադարձ հարգանք կա սովորողների և ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնողների միջև:
- Դպրոցում ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից պաշտպանված են :
- Դպրոցում սովորողների և աշխատակիցների առողջության և անվտանգության պահպանման համար կան պայմաններ, կազմակերպվում են համապատասխան միջոցառումներ:
- Սովորողները մասնակցում են ներդպրոցական, արտադպրոցական միջոցառումներին:
- Սովորողներն ու աշխատակազմն օգտվում են ուսումնանյութական բազայից:
- Ուշադրություն է դարձվում ժողովրդավարական կառավարման սկզբունքներին:

### Թույլ կողմեր

- Դպրոցում չկա ԿԱՊԿՈՒ սովորողի կրթության համար խելամիտ հարմարեցումներ, ռեսուրս-սենյակ:
- Ֆիզիկական միջավայրը գրավիչ չէ:
- Կան որոշակի անհարմարություններ:
- Հաճախ սովորողները իրենց մտքերն ազատ արտահայտելու մեջ կաղապարվում են,համարձակներն ավելի քիչ են:
- Ծնողական համայնքի դերի պասիվություն կա:
- Աշակերտների կողմից նախատեսված, պլանավորած միջոցառումների թիվը քիչ է:
- Ծնողները մտքեր,գաղափարներ են առաջ քաշում,սակայն շահագրգռված չեն իրականություն դարձնել:

- Դպրոցում սովորում են Արցախից տեղահանված  հինգ ընտանիքներից 9 սովորող՝համապատասխանաբար 4-ից  8-րդ դասարաններում:Կատարվել է կարիքի գնահատում, օգտվել են ՏՄԱկ –ի ծառայությունից:Սովորողները ապահովված են դասագրքերով,գրենական պիտույքներով:

## *Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն*

**Ուժեղ կողմեր**

- Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում:
- Փոխադարձ դասալսումներ:
- ԿԳՄՍ նախարարության, ԿԶՆԱԿ-ի կողմից երաշխավորված սեմինարներին մանկավարժների մասնակցություն:
- Դպրոցում առկա ձեռնարկներից, ուսումնամեթոդական նյութերից օգտվելու հնարավորություն կա:
- Մանկավարժական աշխատողները հաճախ են հրավիրվում գեղարվեստի և երաժշտական դպրոց, Սպիտակի քաղաքային գրադարան՝ միջոցառումների մասնակցելու:
- Դպրոցական միջոցառումների ժամանակ  աշխատակազմի աշխատանքը նկատելի է:
- Մանկավարժական աշխատողները արժանացել են պատվոգրերի,շնորհակալագրերի:
- Համայնքի, դպրոցի համար ծրագրեր իրականացրած ուսուցիչը խրախուսվել է շնորհակալագրով:
- Հոգեբանը իր նախաձեռնությամբ հաճախակի է մասնակցում վերապատրաստումների, սեմինարների:

**Թույլ կողմեր**

- Ուսուցիչները չեն մասնակցում կամավոր ատեստավորման:
- Մանկավարժական աշխատողները չեն մասնակցում մրցույթների, չեն մասնակցում որակավորման տարակարգ ստանալուն:
- Աշխատակազմի խրախուսումները կազմում են համեմատաբար ցածր տոկոս:

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները: Դպրոցի ծախսերը կառավարելի են: Առաջնահերթությունը տրվում է այն ոլորտներին, որոնք սովորողների կրթական նպատակների համար են:Հաստիքացուցակը,նախահաշիվն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: Բյուջետային հնարավորություններն են. 1.աշխատավարձ ,հավասարեցված վճարումներ, 2.եկամտահարկի վճարումներ, 3.տնտեսական ծախսեր, 4. գույքի,սարքավորումների ձեռքբերման ծախսեր, 5. էլեկտրաէներգիայի ,ջեռուցման ծախսեր, 6. կոմունալ վճարումներ, 7. այլ ծախսեր, ուսուցիչների պարտադիր վերապատրաստումներ:

Դպրոցի ֆինանսավորումը հիմնականում կատարվում է պետական բյուջեից: Աշակերտների թվի նվազումից ելնելով բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին ,կոմունալ ծախսերին:

| Դպրոցի բյուջեի ծապսերը 2022թ | Հաստատված նախահաշվով 44645.1/հազար դրամ/ | Փաստացի կատարված ծախսեր 44176.6/հազար դրամ/ |
|---|---|---|
| Աշխատավարձ | 38317.8 | 38287.6 |
| Էներգիա, ջեռուցում | 1901.5 | 1712.0 |
| Ջրի վարձ | 130.0 | 118.5 |
| Հեռախոս, ինտերնետ | 127.0 | 99.5 |
| Վերապատրաստում | 192.0 | 192.0 |
| Հայտարարություն, թերթ | 13.0 | 13.0 |
| Խոհարարական ծառայություն | 535.0 | 535.3 |
| Մասնագիտակ ծառայություն | 220.0 | 200.0 |
| Համակարգիչ , նորոգում | 55.0 | 54.3 |
| Գրենական | 130.0 | 115.2 |
| Սնունդ | 1207.2 | 1156.2 |
| Այլ ծախսեր | 450.0 | 382.9 |
| Հարկեր, տուրքեր | 144.3 | 87.4 |
| Կապիտալ վերանորոգում | 1167.0 | 1167.0 |
| Նախագծային աշխատանք | 55.0 | 55.0 |

***Դպրոցի բյուջեն 2023թ.*** կազմել է 44645.1 հազար դրամ (այստեղ ներառված է նաև նախորդ տարվա պարտքը ճաշարանի վերանորոգման), որից աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ՝ 38317.08 հազար դրամ: Վերջինս կազմում է բյուջեի 88 տոկոսը: Բյուջեի մոտ 5 տոկոսը կազմում են կոմունալ վճարները, 5 տոկոսը՝ «Դպրոցական տաք սնունդ» ծրագրին ուղղված միջոցներն են: Մնացած 2 տոկոսն իր մեջ ներառում է դպրոցի համար ընթացիկ կատարվող ծախսերը (գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ, գազի տեխսպասարկում, անվտանգություն, գնումներ, ուսուցիչների վերապատրաստման ծախսեր, «Կրթություն» թերթի բաժանորդագրություն, հայտարարության տեղադրում ):

# Հաստատության առկա հիմնախնդիրները

| *Ոլորտ* | *Խնդիրները* |
|---|---|
| Կառավարման,խորհրդակցական մարմիններ | ✓ Ծրջանավարտների խորհրդի ստեղծում<br>✓ Կառավարման և խորհրդակցական մարմինների սերտ կապի անհրաժեշտություն<br>✓ Սեմինարների կազմակերպում,իրազեկվածություն<br>✓ Ինքնակրթվելը,սեփական իրավունքների,պարտականությունների իմացություն |
| Մանկավարժական համակազմ | ✓ Մասնագիտական գործունեության արդյունավետություն<br>✓ Ունենալ առաջնորդ ուսուցիչ<br>✓ Մասնակցություն հիմնախնդիրներ լուծող ծրագրերին<br>✓ Ստեղծագործական ուսումնական միջավայրի ստեղծում և խթանում<br>✓ Մասնակցություն կամավոր ատեստավորման<br>✓ Մրցույթների մասնակցության խթանում |
| Աշակերտական համակազմ | ✓ Կարողունակ  քաղաքացիների ձևավորում<br>✓ Մասնագիտորեն կողմնորոշված<br>✓ Մրցունակ և հասարակությանն ինտեգրված անձ<br>✓ Բազմակողմանիորեն զարգացած<br>✓ Մեդիագրագետ |

| | |
|---|---|
| Ծնողական համակազմ | ✓ Նախաձեռնող չեն<br>✓ Մասնակից չեն դառնում կրթական նախագծերին,քննարկումներին, տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին<br>✓ Սոցիալական վիճակը որոշիչ դեր է խաղում<br>✓ Դպրոցական, արտադպրոցական միջոցառումներից հրաժարվելը |
| Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ | ✓ Սովորողներին ինտեգրել հասարակական կյանքին<br>✓ Ընդլայնել համագործակցությունների շրջանակը<br>✓ Ամրապնդել սոցիալ-մշակութային կապը<br>✓ Համայնքի զարգացման ծրագրերին մասնակից դարձնել սովորողներին և մանկավարժական համակազմին |
| Ուսումնական միջավայր | ✓ Ուսումնական միջավայրը դարձնել բազմազան,գրավիչ , հետաքրքիր, շարժուն և բաց<br>✓ Ծավալել բազմանպատակ գործունեություն<br>✓ Հանգստի, ժամանցի ճիշտ կազմակերպում<br>✓ Ժամանկի պահանջներին համապատասխան միջավայրի առկայություն<br>✓ Անվտանգ ուսումնական միջավայր.անվտանգության կանոնների պահպանում<br>✓ Առողջ սերունդ՝ առողջ միջավայրում |
| Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների | ✓ Ապահովվել բարձրորակ կրթություն<br>✓ Օլիմպիադաներում բարձր ցուցանիշների գրանցում<br>✓ Սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղված հայտորոշում,պլանավորում, իրականացում<br>✓ Երկարօրյա ուսուցման իրականացում |

| | |
|---|---|
| Տեխնոլոգիաներ և նորարարություն | ✓ Դասապրոցեսի կազմակերպում՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ<br>✓ Նոր մեթոդների ներդրում<br>✓ Ուսուցումը դարձնել աշխատանքային գործընթաց<br>✓ Անվտանգության կանոնների պահպանում<br>✓ Նորարարությունների ընդունում և կիրառում |
| Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր | ✓ Մանկավարժական համակազմի ակտիվ մասնակցություն<br>✓ Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս մանկավարժների մասնակցության ապահովվում |
| | |

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովվող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը,ակնկալվող արդյունքը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները ,ռիսկերը,ռիսկերը մեղմող գործողությունները,արդյունքների գնահատման չափանիշները:

## Ոլորտ 1 Դպրոցի շենքային պայմանները,նյութատեխնիկական բազան

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Դպրոցի բակի, սպորտհրապարակի բարեկարգում,կանաչապատում,աղբամանների տեղադրում | 2024-2027թթ. | Տնօրենություն,վարչատնտեսական համակարգող,տնտեսվար | Ֆինանսական, աշխատանքային ռեսուրսների բացակայություն,արտակարգ իրավիճակներ,համավարակներ և մարտահրավերներ,արտաբյուջետային միջոցների բացակայություն,աշակերտ-դասարան թվի նվազում,ներդրումների բացակայություն<br><br>*Ռիսկերը մեղմող գործողություններ*<br><br>Աշակերտների թվի ավելացում,կանխարգելիչ միջոցառումներ,կամավորական աշխատանքներ,դպրոցի ֆինանսավորման ճիշտ պլանավորում,հետևողական աշխատանք | Հիմնադիր, լիազոր մարմին, հովանավորներ,դրամաշնորհային ծրագրեր , արտաբյուջետային միջոցներ,ֆինանսական միջոցներ պետբյուջեից, նվիրատվություններ,սպորտգույք,կանաչապատման համար անհրաժեշտ պարագաներ<br><br>Ժամանակակից տեխնիկա, ՏՀՏ գործիքներ լրացուցիչ գրականություն, դիդակտիկ պարագաներ, գրքեր , սեղան-աթոռներ, դուռ-լուսամուտներ |
| Դպրոցի ընթացիկ վերանորոգում՝ նորացված դուռ-լուսամուտներով,ջեռուցման համակարգով | 2023-2026թթ. | Տնօրենություն,վարչատնտեսական համակարգող,տնտեսվար | | |
| Դպրոցի գրադարանի արդիականացում ,համալրում,մասնագիտական,ժամանակակից , և մանկական ,գեղարվեստական գրքերով QR կոդերով գրքերի ձեռքբերում | 2023-2028թթ. | Տնօրենություն,գրադարանավար,ՄԿԱ գծով փոխտնօրեն,ԴԱԿ աշխորհուրդ | | |
| Smart դասարան | 2023-2026թթ. | Տնօրենություն,վարչատնտեսական համակարգող | | |

| 1. | 2. | 3. | 4. | 5. |
|---|---|---|---|---|
| Սպորտդահլիճի վերանորոգում,գույքի ձեռքբերում | 2023-2028թթ. | Լիազոր մարմին,վարչատնտեսական համակարգող,տնօրեն | արտաբյուջետային միջոցների ստեղծում | Բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ Պետբյուջե,արտաբյուջետային միջոցներ: Սպորտային գույք, շինանյութ,մարդկային ռեսուրս |
| Առարկայական դասարանների ստեղծում | 2023-2025թթ. | Տնօրեն,վարչատնտեսական համակարգող | | |

## *Ակնկալվող արդյունքներ*

Դպրոցը կդառնա կրթական կարիքներ ապահովվող ուսումնական միջավայր,բարեկարգված, կանաչապատ բակով, սպորտհրապարակով,տաք, լուսավոր դասասենյակներով, հարուստ գրադարանով,որտեղ կիրականացվի որակյալ կրթություն:

# Ոլորտ 2 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնի կական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Ստեղծել շրջանավարտների խորհուրդ | 2024թ. | Տնօրեն,փոխտնօրեն, ՄԿԱԳ փոխտնօրեն,ԴԱԿ | Ծփումների նվազում, աշխատաժամանակի համընկնում,ծանրաբեռնվածություն, ժամանակի սխալ տնօրինում, հեռավար հարթակից օգտվելու կարողության պակաս<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում,ժամանակացույցի կազմում, իրազեկվածություն, համագործակցության ակտիվացում, հեռավար նիստերի կազմակերպում, ապահովվել մասնակիցների ներկայությունը | ՏՀՏ գործիքներ,դպրոցի շրջանավարտներ,տնօրեն ,խորհրդակցական մարմիններ,ԿԶՆԱԿ, կառավարման խորհրդի անդամներ, լրացուցիչ գրականություն, ուղեցույցներ՝ թղթային և էլեկտրոնային, ուսումնական նյութեր |
| Հետևել խորհրդակցական մարմինների,գործառույթնե րի պատշաճ կատարմանը, օգտվել դպրոցի կայք էջից, լինել տեղեկացված | 2023-2028թթ. | Տնօրենություն , ԴԱԿ,Կխ, ,մեթոդմիավորումներ, դասղեկներ,ՄԿԱԳ,ԱԾ,Ծխ, օպերատոր | | |
| Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև | 2023-2028թթ. | Տնօրենություն , ԴԱԿ,Կխ, ,մեթոդմիավորումներ, դասղեկներ,ՄԿԱԳ,ԱԾ,Ծխ | | |
| Մասնակցություն վերապատրաստումներին, համապատասխան ուղեցույցների ձեռքբերում | 2023-2028թթ. | Տնօրեն, ԿԳՄՍ,ԿԶՆԱԿ,հիմնադիր, լիազոր մարմին | | |

## ***Ակնկալվող արդյունքներ***

Դպրոցը կունենա շրջանավարտների խորհուրդ,կանոնակարգված աշխատանքը կտա ցանկալի արդյունք,կունենանք իրազեկված,իր գործառույթներն ու լիազորությունները ճիշտ իրականացնող կառավարման և խորհրդակցական մարմիններ:

# Ոլորտ 3 Մանկավարժական համակազմ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխն իկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Մանկավարժական համակազմի վերապատրաստում,ատեստավ որում,փորձի փոխանակում,աջակցություն սկսնակ ուսուցիչներին | 2024-2028թթ. | Տնօրեն, ԿԳՄՍ,փոխտնօրեն,ԿՉ ՆԱԿ,ՄԿԱԳ, մեթոդմիավորումներ | Պայմանավորված երկրի իրավիճակից`անցում հեռավար կրթության, հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Վճարովի դասընթացների առկայություն, ինքնավստահության բացակայություն, կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն<br><br>*Մեղմող հանգամանքներ*<br><br>Պարտադիր վերապատրաստումներ,կարողությունների ձեռքբերում համախմբվածություն,ինքնակրթություն, որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում, մոտիվացնել ուսուցիչներին ուղղորդել կամավոր ատեստավորման;<br>Ունենալ պլանավորած ծրագիր արտակարգ իրավիճակների համար, ուսուցիչներ խրախուսանք: | Պետական բյուջե, լիազոր մարմին, ԿԳՄՍ, ԿՋՆԱԿ, ՏՄԱԿ,ՅԿ, տնօրեն, ուսումնական ձեռնարկներ, դիդակտիկ պարագաներ, լաբորատոր սարքավորումներ նյութեր, ժամանակակից տեխնիկա, պատվոգրեր, շնորհակալագրեր, հուշանվերներ |
| Մասնագիտական որակի բարելավում,ինքնակրթությամբ և դասավանդման ընթացքում ՏՀՏ գործիքների օգտագործում | 2023-228թթ. | | | |
| Կամավոր ատեստավորման,տարակարգ ստանալու, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին մասնակցելու ցանկության խթանում | 2024-2028թթ. | | | |
| Ներդպրոցական վերահսկողություն | 2023-2028թթ. | Տնօրեն,խորհրդակցա կան մարմիններ, կառավարման խորհուրդ , աշակերտներ մանկավարժներ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մասնակցություն կրթական տարբեր ծրագրերին,նախագծերին | 2023-2028թթ. | Տնօրեն,ուսումնական գծով փոխտնօրեն,մանկավարժներ, շահառու կազմակերպություններ | *Ռիսկեր.*<br>Ֆինանսական միջոցների սղություն, ցանկության բացակայություն,անտարբերություն<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Ֆինանսական միջոցների ճիշտ տնօրինում, մոտիվացում՝ ելնելով իրավիճակից, խրախուսում, առաջավոր փորձի փոխանակում: | |
| Խրախուսական միջոցների ներդրումներ, մանկավարժական աշխատողներին՝ շնորհակալագրեր, պարգևատրումներ | 2023-2028թթ. | Տնօրեն, փոխտնօրեն,խորհրդակցական մարմիններ,Կխ, համայնք, մարզպետարան, ԿԳՄՍ: | | |

## ***Ակնկալվող արդյունքները***

Վերապատրաստված ,ատեստավորված,ինքնակրթված,բազմակողմանիորեն զարգացած մանկավարժական համակազմ: Արդյունքում հաջողություններ գրանցած,ձգտող, մրցունակ մանկավարժներով համալրված դպրոց:

## Ոլորտ 4 Աշակերտական համակազմ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Կարողունակ քաղաքացիների ձևավորում, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, հասարակությանը ինտեգրված, մեդիագրագետ սովորող | 2023-2028թթ. | Տնօրենություն, փոխտնօրեն,ուսուցիչ, գրադարանավար,հոգեբան ,ուսուցչի օգնական,դասղեկ,ՄՄ,ԴԱԿ, ՄԿԱԳ,ՏՄԱԿ | *ռիսկեր*<br>Երկրի ճգնաժամային իրավիճակը, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններ,այլ հետաքրքրություններ,համացանցից ոչ ճիշտ օգտվելը | Մանկավարժական, աշակերտական համակազմ,դպրոցի նյութատեխնիկական հարստացած բազան, |

| 1. | 2. | 3. | 4. | 5. |
|---|---|---|---|---|
| Ուսումնառության որակի բարելավում Ստեղծել գրավիչ,ներառական , մասնակցային աշակերտակենտրոն կրթական միջավայր | 2024-2026թթ. | Տնօրեն, մանկավարժական համակազմ, դասղեկներ, ծնողներ,հասարակություն, համայնք, շահառու կազմակերպություններ | *Մեղմող գործողություններ*<br><br>Երկարօրյա ուսուցման ճիշտ, արդյունավետ կազմակերպում,խմբակների առկայություն<br>Պարտադիր խմբակներ՝ «Առողջ ապրելակերպ», «Մասնագիտական կողմնորոշում»: Ուսումնասիրել ֆինանսական գրագիտություն:<br>Ներգրավվածություն մշակութային կյանքին:<br>Ամուր պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը:<br>ՏՀՏ գործիքների օգտագործում, հեռավար դասընթացների կազմակերպում, ֆինանսական միծոցների արդյունավետ կառավարում: | Արվեստի, արհեստի բնագավառի նշանավոր մարդիկ:<br>Դպրոցի ճանաչված,հաջողակ շրջանավարտները,ազգային գործիչներ:<br>Բուժհաստատությունները, ԲՈՒՀ, ուսումնարաններ , վարժարաններ,<br>Սպորտգույք, դիդակտիկ պարագաներ, լաբորատոր գույքեր, սարքավորումներ, նյութեր, smart դասարան, ՏՀՏ գործիքներ, գովասանագրեր, շնորհակալագրեր |
| Աշակերտական ինքնավարության խրախուսում, խտրականության բացակայում | 2023-2028թթ. | | | |
| Աշխորհիրդի նախաձեռնություններին աջակցություն | 2023-2028թթ. | | | |
| Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ. ճանաչողական այցեր, հանդիպումներ,քննարկումներ,համագործակցության շրջանակի ընդլայնում | 2023-2028թթ. | | | |

***Ակնկալվող արդյունքները***

Կունենանք մեդիագրագետ, հայրենասեր, կարողունակ քաղաքացի, հասարակությանն ինտեգրված հմուտ անձ:

## Ոլորտ 5 Ծնողական համակազմ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,*<br>*Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Խթանել ծնողական համակազմի մասնակցությունը տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին | 2023-2028թթ. | Տնօրեն փոխտնօրեն,դասղեկներ, հոգեբան ,ԴԱԿ , ուսուցչի օգնական, ծնողխորհուրդ, համայնք | Ծնողների նկատելի պասիվություն, ինքնակրթության բացակայություն,ՏՀՏ գործիքներին չտիրապետելը,դպրոցի հիմնախնդիրներով չհետաքրքրվելը,ծնողի իրավունքների ու պարտականությունների թերի իմացություն:<br><br>*Մեղմող գործողություններ*<br>Ծնողներին դպրոցի, դասարանի հոգսերին ծանոթացնել<br>Ծնողների դերի բարձրացում,խրախուսանք,ծնող-դպրոց կապի ամրապնդում,քննարկումներ ծնողական ժողովների ժամանակ, տիրապետում ՏՀՏ գործիքներին ծնողների կողմից, զարգացնել հմտությունները:<br>Կազմակերպել «իրավունքներ,պարտականություններ ծնողների և երեխաների» թեմայով: | ՏՀՏ գործիքներ,հարցաթերթիկներ, արձանագրություններ, դասղեկի, հոգեբանի աջակցություն, դիդակտիկ պարագաներ,ուսումնաօժանդակ մեթոդական ձեռնարկներ, գրականություն, ժամանակակից սարքավորումներ |
| Ապահովվել ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին մասնակցությունը | 2024-2028թթ. | | | |
| Ներգրավվել ծնողներին դպրոցում իրականացվող հասարակական աշխատանքներում | 2023-2027թթ. | | | |
| Ծնող – դպրոց կապն ամրապնդել | 2023-2028թթ. | | | |

### ***Ակնկալվող արդյունքը***

Կունենանք իրազեկված, պատրաստակամ, աջակցող , նախաձեռնող, որոշումներ կայացնող ծնողներ:

## Ոլորտ 6 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների,  շահառու կազմակերպությունների հետ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում.շաբաթօրյակներ,ծառատունկ,եկեղեցական տոներին մասնակցություն,կրթամշակութային միջոցառումների մասնակցություն | 2024-2028թթ. | Տնօրեն,դասղեկներ,ԴԱԿ,ՄԿԱԳ,ծնողխորհուրդ, աշխորհուրդ, ԿԳՄՍ, | Համայնքի խնդիրներն ծանոթ չլինելը:<br>Համայք-դպրոց կապի թուլացում,երկրի ճգնաժամային վիճակ,համավարակներ<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Համայնքի ներգրավվածությունը,ակտիվացնել դպրոց-համայնք կապը,հանդիպումներ համայնքապետի, ավագանու անդամների հետ:<br>Ծանոթանալ համայնքի խնդիրներին, ցուցաբերել մասնակցություն<br>Կազմակերպել հանդիպումներ շահառու կազմակերպությունների հետ: | Պետբյուջե , դպրոցական բաժանորդային աբոնենտային համակարգի ծրագիր,համայնքի ներդրումներ,ՀԿ բարեգործական կազմակերպություններ, տրանսպորտային միջոցներ,շնորհակալագրեր, պատվոգրեր, հրավիրատոմսեր |
| Այցելություններ համայնքապետարան, հանդիպումներ համայնքի ավագանու հետ, ՀԿ-ների հետ | 2023-2028թթ. | | | |
| Դպրոցը սոցիալ –մշակութային կրթոլորտ<br>Համագործակցություն մանկապարտեզների,մանկատների, ծերանոցների ,քաղաքային գրադարանների, թանգարանների հետ | 2023-2028թթ. | | | |

**Ակնկալվող արդյունքը**

Սովորողների սոցիալականացում, համայնքում դպրոցի դերի բարձրացում,արժևորել սեփական ընտանիքի, համայնքի ինքնությունը պետության դերում:

## Ոլորտ 7 Ուսումնական միջավայր

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում | 2023-2028թթ. | Տնօրեն , հոգեբան, դասղեկներ, վարչատնտեսական աշխատողներ, մանկավարժներ | Ոչ բավարար ֆինանսական միջոցներ, արտաբյուջեի բացակայություն,երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Ֆինանսական միջոցների ճիշտ տնօրինումժ, բյուջեի արդյունավետ, խելամիտ կառավարում,տնտեսում | Պետական բյուջե, հովանավորներ, բարերարներ,ՀԿ-ներ,նոր տեխնոլոգիաներ,տեսախցիկներ, ռեսուրս սենյակ, հագեցած լաբորատորիա,ուսումնական նյութեր, մանկավարժական համակազմ, վարչատնտեսական համակարգող, տնօրենի աջակցություն. |
| Նորագույն տեխնոլոգիաներով զինված դասասենյակներ | 2024-2028թթ. | Հիմնադիր, վարչատնտեսական համակարգող,լաբորանտ, տնօրեն | | |
| Խելամիտ հարմարեցումներով ներառական կրթության իրականացում մասնակցային արժեքային ուսումնական միջավայրում: | 2023-2028թթ. | ՏՄԱԿ,տնօրեն, մանկավարժական համակազմ | | |
| Թիմային աշխատանքի կազմակերպում,միջոցառում-ների պլանավորում՝ հաշվի առնելով կարծիքներ | 2023-2026թթ. | Տնօրեն, փոխտնօրեն,դասղեկներ,մանկավարժական համակազմ | | |

### ***Ակնկալվող արդյունքը***

Կունենանք ժամանակակից սարքավորումներով հագեցած ուսհաստատություն, անվտանգ, գրավիչ, ներառական, բազմակարծիք, մասնակցային և ժողովրդավարության սկզբունքներով:

## Ոլորտ 8 Կրթության որակն ըստ սովորողների արդյունքների

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր,<br>Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնի կական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Կրթության որակի բարելավում, ՀՊՉ սահմանված արդյունքների ապահովում | 2023-2026թթ | Տնօրեն, փոխտնօրեն,դասղեկներ, ուսուցիչներ,մեթոդմիավորումներ,ծնողներ, ՄԿԱԳ, ուսուցչի օգնական, հոգեբան | Հեռավար դասընթացներ,բացակայություններ,միօրինակ դասապրոցես,հետաքրքրությունների անկում, սովորողների թվի պակաս, ֆինանսական միջոցների պակաս:<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինում, ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպում Սովորողների ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, նոր մեթոդների կիրառում, դպրոցի կայք էջում հաջողությունների գրանցում, լուսաբանում: Հաշվի առնել սովորողների նախասիրությունները | Պետբյուջե,դիդակտիկ նյութեր,ՏՀՏ գործիքներ,կահավորված դասասենյակներ, լաբորատոր սարքավորումներ, ՀՊՉ ձեռնարկներ, ուսումնական նյութեր, սպորտգույք,մանկավարժական համակազմ, ծնողական համայնք, վարչական աշխատողներ |
| Հայտորոշիչ աշխատանքների կազմակերպում, մշտադիտարկումներ, դասալսումներ | 2023-2028թթ | | | |
| Առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում | 2023-2028թթ | | | |
| Խմբակների,երկարօրյա խմբերի ձևավորում՝ կրթության որակի բարելավման նպատակով | 2023-2025թթ | | | |

### ***Ակնկալվող արդյունքը***

Կունենանք կրթության բարձր որակ, օլիմպիադաներում աշակերտների մասնակցություն և բարձր ցուցանիշ, մարզային և հանրապետական փուլերում մասնակիցների թվի աճ, ԿԱՊԿՈՒ սովորողը կգրանցի բավարար արդյունք:

# Ոլորտ 9 Տեխնոլոգիաներ, նորարարություններ

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր, Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Նորագույն տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների բարելավում, մեդիագրագիտության դասընթացի կազմակերպում | 2023-2028թթ. | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ուսումնական գծով փոխտնօրեն,մանկավարժական համակազմ | Ֆինանսական միջոցների բացակայություն, նորարարությունը դժվարությամբ ընդունող մանկավարժ, արտակարգ իրավիճակների ի հայտ գալը<br><br>*Մեղմող գործողություններ*<br><br>Ներդրումներ,փորձի փոխանակում,հաջողակ գործի հրապարակում, խրախուսում,լուսաբանում, մանկավարժների մոտիվացում, մասնակցություն վերապատրաստումների: | Պետբյուջե, դրամաշնորհային ծրագրեր, ՀԿ-ներ, բարերարներ, ժամանակակից ՏՀՏ գործիքներ, գրականություն, հարմարեցված գույք, էլեկտրոնային պաշարներ |
| Առարկայական դասասենյակների բացում, ժամանակակից գրականության ձեռքբերում | 2025-2027թթ. | | | |
| Նոր տեխնոլոգիաների ձեռքբերում | 2024-2028թթ. | | | |
| Դասասենյակների կահավորում՝ շարժական գույքով(սեղան-աթոռներ),<br>Բազմաֆունկցիոնալ կահույքով, ՏՀՏ գործիքներով: | 2024-2028թթ. | | | |

## ***Ակնկալվող արդյունքը***

Կունենանք 21-րդ դարի կարողունակ սերունդ, ՏՀՏ միջոցների կիրառմամբ նորարար, ստեղծագործ ուսուցիչներ: Դպրոցը կդառնա գրավիչ, որակյալ, զարգացնող կրթական միջավայր:

# Ոլորտ 10 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

| *Նպատակների և խնդիրների սահմանում* | *Ժամանակացույց* | *Պատասխանատուներ* | *Ռիսկեր, Ռիսկերը մեղմող գործողություններ* | *Միջոցները,նյութատեխնիկական պարագաները* |
|---|---|---|---|---|
| Փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ քննարկումների անցկացում խորհրդակցական մարմիններում | 2023-2028թթ | Տնօրեն, մանկավարժական համակազմ, վարչական աշխատողներ,դորհրդակցական կառավարման մարմիններ, օպերատոր | Իրավունքների,պարտականությունների չիմացություն<br><br>*Մեղմեղ գործողություններ*<br><br>Պատասխանատուների կողմից աշխատանքների ճիշտ կազմակերպում, իրազեկվածությունը հասցնել բավարար աստիճանի, հետևել օրենսդրական փոփոխություններին | Իրավական ակտեր, ՏՀՏ գործիքներ, խորհրդակցական մարմինների անդամներ, կառավարման խորհրդի կազմ, տնօրեն, դպրոցի կանոնադրություն, Օրենսգիրք |
| Իրավական ակտերի լուսաբանում դպրոցի կայք էջում | 2023-2028թթ | | | |

## ***Ակնկալվող արդյունքը***

Կունենանք տեղեկացված, բազմակարծիք, իրավական, գրագետ ուսումնական միջավայր:

# Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

**Գնահատման համընդհանուր չափանիշներ, որոնք կարող են չափել դպրոցի կատարողականի ընդհանուր արդյունավետությունը**

*Քանակական և որակական գնահատում*

- Հանրակրթական ծրագրերի իրականացման արդյունավետության, կրթության որակի և առաջադիմության
- Սովորողների առաջադիմության և զարգացման
- Սովորողների ներգրավվածության արտադասարանական և արտադպրոցական գործընթացում
- Ծրջանավարտների հաջողությունների
- Անձնակազմի մասնագիտական զարգացման, արժևորման, խրախուսման
- Դպրոցում գործընթացների կազմակերպման(ներառականության,բաց ոյահոգեբանական,բազմակարծիք մշակույթի զարգացման, մասնակցության)
- Ռեսուրսների. մարդկային, նյութական, ֆինանսատնտեսական
- Համայնքի, շահագրգիռ կողմերի ներգրավվածության
- Համագործակցությունների արդյունավետության
- Տեխնոլոգիաների ինտեգրման
- Հալածանքի , օտարման և բռնության կանխարգելման

# Գնահատման չափանիշներ

*Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Դպրոցում առկա են առարկայական դասարանները, ԲՏՃՄ առարկաների առանձին լաբորատորիաներ՝ սարքավորումներով, նյութերով: ՏՀՏ գործիքներով զինված են դասասենյակները, կա smart դասասենյակ: Գրադարանը հագեցած է անհրաժեշտ գրականությամբ: Կա ռեսուրս սենյակ, խելամիտ հարմարեցումներով , պարագաներով: Սպորտդահլիճը հարուստ է գույքով, բարեկարգված է, վերանորոգված: դպրոցի բակը հարմարեցված է բաց դասերի համար: Ըստ պլանի կատարվում է դպրոցի վերանորոգման աշխատանքները: Դուռ-լուսամուտները ամբողջությամբ փոխված են , ձեռք են բերվել տեսախցիկներ: Առկա է ընթերցասրահ: | Ձեռք են բերվել լաբորատորիայի համար նյութեր, մի քանի նոր սարքավորումներ: ՏՀՏ գործիքներն ավելացել են կիսով չափ: Կա ռեսուրս սենյակ սակայն ոչ հագեցած: Գրադարանը համալրվել է քիչ քանակությամբ գրքերով, ձեռնարկներով: Մասնակիորեն վերանորոգվել է սպրոտդահլիճը, սպորտհրապարակը, ձեռք է բերվել գույք ՝ կիսով չափ: Դպրոցի բակը բարեկարգվել է տեղ-տեղ տեղադրված է 1-2 տեսախցիկ: դուռ-լուսամուտները փոխվել են մասամբ, աշակերտական գույքը թարմացվել է ոչ ամբողջությամբ: | Ձեռք չեն բերվել նոր սարքավորումներ, բացակայում է ռեսուրս սենյակը: ՈՒսումնադիդակտիկ նյութերը հին են, մաշված,չկան համապատասխան ձեռնարկներ, չի վերանորոգվել սպորտդահլիճը, սպորտհրապարակը, նոր գույք ձեռք չի բերվում: Դպրոցում չի կատարվում վերանորոգման աշխատանքներ: |

## *Կառավարման, խորհրդակցական մարմինները*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Ստեղծվել է շրջանավարտների խորհուրդ, ակտիվ է, աջակցում է դպրոցին, համագործակցում տնօրենի, կառավարման, խորհրդակցական մարմինների հետ: Յուրաքանչյուրը գիտի իր գործառույթը, վերապատրաստվում են, տեղեկացված են, իրազեկված և համագործակցում են: Ըստ ժամանակացույցի հրավիրում են նիստեր, չեն բացակայում: | Ստեղծվել է շրջանավարտների խորհուրդ , ակտիվ մասնակցություն չի ցուցաբերում: Կառավարման խորհրդակցական մարմինները հրավիրում են նիստեր, կայացնում որոշումներ: Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է նիստերին: | Չի ստեղծվել շրջանավարտների խորհուրդ: Կառավարման խորհրդակցական աշխատանքներում կան թերություններ, արդյունավետ գործունեություն չեն ծավալում: Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով չի մասնակցում նիստերին: Համագործակցությունը նկատելի չէ: Պարտականությունները չի կատարվում ամբողջությամբ, վերահսկողությունը թույլ է: |

## *Մանկավարժական համակազմ*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Մանկավարժները մասնակցում են կամավոր և պարտադիր ատեստավորման: դասապրոցեսին պարտադիր օգտագործում են ՏՀՏ գործիքներ: Զբաղվում են ինքնակրթությամբ, ցանկություն ունեն մասնակցելու տարբեր մրցույթների: Կատարվում են փոխադարձ դասալսումներ, առաջավոր փորձի փոխանակում,աջակցություն սկսնակ ուսուցիչներին: Իրականացնում են նախագծային աշխատանք: Պարգևատրվում են, խրախուսվում  շնորհակալագրերով, պատվոգրերով, դրամական պարգևներով; | Մանկավարժները մասնակցում են պարտադիր ատեստավորման: Հաճախ օգտագործում են ՏՀՏ գործիքներ: Ոէսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվում են, սակայն ոչ ամբողջական: Ուսուցիչների մի մասը պատրաստ է իրականացնել նախագծային աշխատանք: խրախուսովում են մանկավարժները պատվոգրերով, շնորակալագրերով: | Մանկավարժները դժկամությամբ են մասնակցում ատեստավորմանը: ուսուցիչների, մանկավարժների համար խրախուսման համակարգ չկա: սկսնակ ուսուցիչները մեթոդական աջակցություն քիչ են ստանում; ներդպրոցական վերահսկողություն չի իրականացվում կամ շատ թույլ: Փոխադարձ դասալսումներ թիվը քիչ է: Առաջավոր փորձի փոխանակում չի իրականանում: |

## *Աշակերտական համակազմ*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Աշակերտական խորհուրդը գործում է ակտիվ , նպատակային: Մասնագիտորեն կողմնորոշվում են ավարտական դասարաններում՝ շնորհիվ տարվող աշխատանքների : Ստեղծված է ներառական, մասնակցային կրթական միջավայր: Ինքնուրույն որոշումներ են կայացվում, ազատ և ճիշտ օգտվում են ՏՀՏ գործիքներից, մեդիագրագետ են : Տնօրենի կողմից ստանում են աջակցություն, հաշվի են առնվում սովորողի կարծիքներն ու կարիքները, նախասիրությունները: աշակերտական խորհուրդը համագործակցում է մյուս խորհուրդների հետ, իրականացնում են նախագծային աշխատանքներ: ռազմահայրենասիրական միջոցառումների ակտիվ մասնակիցն են: | Ձևավորվել է աշակերտական խորհուրդը, սակայն պասիվ է: Ամբողջ ներուժով չի տարվում աշխատանք մասնագիտական կողմնորոշման ուղղված: Ներառական,կրթական , մասնակցային միջավայրի համար կան պայմաններ: Որոշումներ կայացնում են ոչ միշտ: Օգտվում են ՏՀՏ գործիքներից: Հաշվի են առնվում կարիքներն ու կարծիքները, բայց ոչ ամբողջ ծավալով: | Աշակերտական խորհուրդը ձևավորված է սակայն ձևական բնույթ է կրում: Ներառական, մասնակցային կրթական միջավայր չի ստեղծվում; Ինքնուրույն որոշումներ չեն կայացվում: Նախագծերն չկա աջակցություն: Լսելի չէ սովորողի ձայնը: |

## Դպրոց–համայնք կապերը, ծնողական համայնքի, գործընկերների համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Դպրոց- համայնք կապն առկա է, նաև շահագրգիռ կողմերի, գործընկերների հետ ձևական բնույթ չի կրում: Կապն արդյունավետ է. միմյանց խնդիրներով անհանգստանալը, լուծում տալով դրանց , ակտիվ մասնակցություն ծրագրերին, հետադարձ կապի ապահովվում:Դպրոցը համայնքի համար սոցիալ-մշակութային կենտրոն է համայնքի կողմից կան խրախուսական միջոցներ դպրոցը համայնքի համար կարևոր դեր ունի; Ծնողական համայնքի ներգրավվածությունը շարունակական է, նպատակային հաշվետու: Ծնողներն օժանդակում են ուսումնադաստիարակչական աշխատանքներին , խրախուսում և խրախուսվում են:<br>Երկարօրյա ուսուցումը դպրոցում իրականացվումէ ըստ կարգի, հաշվի է առնվում սովորողի կարիքները: Արդյունքը գոհացնող է: | Դպրոց- համայնք կապը այլ գործընկերների և ծնողների հետ համագործակցությունը տեսանելի է: ծրագրերի, միջոցառումների ժամանակ որոշակի աջակցություն կա: Հանդիպումներ քննարկումներ հաճախակի չեն կասմակերպվում: Ծնողական համայնքի հետ տարվում են աշխատանքներ: Երկարօրյա ուսւոցման գործընթացը կազմակերպվում է՝ ոչ իր ողջ ծավալով, սովորողների առաջադիմության մեջ որոշակի դրական տեղաշարժ է նկատվում: | Համագործակցություն գրեթե չկա; միմյանց խնդիրներով չեն հետաքրքրվում: Համայնքը դպրոցի խնդիրներին ծանոթ չէ: Ծնողական համայնքն իր աշխատանքն բարեխղճորեն չի կատարում: Արտադպրոցական միջոցառումներին հազվադեպ են մասնակցում: երկարօրյա ուսուցումը նպատակին չի ծառայում , արդյունքը գոհացնող չէ, սովորողների և ծնողների կարիքները հաշվի չեն առնվել : |

## *Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Ամփոփիչ բարձր գնահատականները համապատասխանում են վերջնարդյունքներին, այն հիմնավորված է արձանագրությամբ: Սովորողները, մանկավարժները իրականացնում են նախագծային աշխատանք: ՏՀՏ գործիքներից ազատ օգտվում և կիրառում են սովորողներն ու մանկավարժական համակազմը: Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվն ավելանում է աստիճանաբար: Կրթական ուսումնական միջավայրը գրավիչ է, ներառական, մասնակցային, խթանիչ դեր ունի: Ներքին և արտաքին գնահատումների արդյունքները համապատասխանում են: Իրականացվում է լիարժեք վերահսկողություն: Խրախուսվում են սովորողն ու աշխատակազմը՝ շնորհակալագրեր , պատվոգրեր, պարգևներ: | Պլանավորած գործողությունները իրականացվում են 40-89 % -ով , կատարվում են դասալսումներ, բաց դասեր, միջոցառումներ, նախագծեր, սակայն կան որոշակի թերություններ:խրախուսում իրականացվում է, բայց ոչ հաճախակի: կամավոր ատեստավորված 1-2 ուսուցիչ կա դպրոցում: Նորարարություններն ընդունում են, բայց դժվարությամբ: | Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակին չեն ծառայում: Վերահսկողություն չի իրականացվում: Ժամկետները չի վերանայվում: Գործողությունների համապատասխանությունը ակնկալվող արդյունքին 0-39%: ոչ բոլոր առարկաներից են իրականացվում դասալսումներ: Խրախուսման համակարգ չի գործում : |

## *Բազմակարծիք, ներառական, մասնակցային միջավայրի գնահատման չափանիշները*

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Գնահատվում է համագործակցությունը, կատարվում է թիմային աշխատանք, խրախուսվում է սովորողը ծնողը, դպրոցական համակազմը ներգրավվածության , ուսումնադասիարակական աշխատանքներին մասնակցության համար : Դպրոցում ազատ, անկաշկանդ քննարկումներ են կատարվում, կարծիքներ լսում, որոշումներ կայացնում : Ժողովրդավարական կառավարման սկզբունքները լիովին ապահովված են ; Արժանահավատ, արդար գնահատման համակարգը բոլորի համար է: Ուսհաստատության կառավարման գործընթացին մասնակիցները բարեխղճորեն կատարում են պարտականությունները : Ներառական կրթությունը իրականացվում է ըստ պահանջի: Ուշադրության կենտրոնում են հատուկ օժտվածություն ունեցող և ԿԱՊԿՈՒ սովորողները: Դպրոցական միջոցառումներին մասնակից են դառնում անխտիր բոլորը ,արտադպրոցական միջոցառումներին `ըստ ցանկության և պահանջի: Դպրոցում կան խելամիտ հարմարեցումներ, սովորողի և աշխատողի համար անհրաժեշտ պայմաններով : Դպրոցում աշխատում է բազմամասնագիտական խումբ: | Դպրոցում գործում է սովորող-ուսուցիչ-ծնող կապը: Ստեղծված են պայմաններ ներառական, մասնակցային կրթություն իրականացնելու համար: Միջոցառումների մասնակիցների թիվը շատ է: Կառավարման խորհրդի ևխորհրդակցական մարմիններից դժգոհություններ չկան, յուրաքանչյուրն ունի իր կարծիքը , կայացնում են որոշումներ: Խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը թույլ չէ: | Բազմակարծությունը չի խրախուսվում: Ուսումնադաստիարակչական աշխատանքներում բոլորը չեն ընդգրկվում: Նիստերի ժամանակ որոշումներն ընդունվումէ ոչ բոլորի համաձայնությաբ: Սովորողներն ու անձնակազմը խնդիրների մասին չեն բարձրաձայնում: Շահագրգիռ կողմերը, Ծնողները դպրոցոմ խնդիրների լուծմանը չեն մասնակցում: ուսումնական միջավայրը չունի խելամիտ հարմարեցումներ: Դպրոցում բազմամասնագիտական խումբն ըստ գրաֆիկի չի աշխատում: |

## Դպրոցի անձնակազմին արժևորման, գնահատման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Անձնակազմի յուրաքանչյուր անդամի դերը կարևորվում է դպրոցում, գնահատվում, խրախուսվում՝ ելնելով աշխատանքի արդյունքից, արձանագրած արդյունավետությունից; Դպրոցում առկա է անձնակազմի համար ինքնակրթության նպաստավոր պայմաններ, հնարավորություններ: Նորարարությունները խթանիչ ուժ ու համգամանք են խրախուսման ու արժևորման համար, ըստ որի արժանանում են խրախուսանքի: Խրախուսումն իրականացվում է կրթության կառավարման մարմինների , շահագրգիռ կազմակերպությունների կողմից: | Դպրոցում յուրաքանչյուր անձնակազմի անդամի նկատմամբ կա ուշադրություն, գովասանք, խրախուսման ոչ միշտ են ներկայացվում համայքի , մարզպետարանի կողմից : Կա անձնակազմի բարի համբավ ; Ինքնակրթվելու համար դպրոցն ստեղծում է պայմաններ ձեռք բերում ռեսուրսներ: հանդես են գալիս նոր գաղափարներով, ցանկություն են հայտնում իրագործել: | Անձնակազմը խրախուսվում, արժևորվում է միայն դպրոցական մակարդակով: Դպրոցում ինքնակրթությանը ժամանակ չի տրամադրվում, կա ստեղծագործական մտածողություն, նոր գաղափարներ են ծնվում, սակայն չեն իրագործվում: |

## Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Դպրոցում բարձր է մեդիագրագիտության մակարդակը : իրականացվում են բռնության հալածանքի , օտարման կանխարգելման միջոցառումներ, հանդիպումներ մասնագետների հետ: Անվտանգությունն ապահովված է դպրոցում : Բարձր է անձնակազմի սովորողների , ծնողների իրազեկվածության աստիճանը, գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, ճգնաժամային խնդիրների լուծման հմտությունները: Դպրոցում չի արձանագրվել օտարման, բռնության դեպքեր, վերահսկողությունը բարձր մակարդակի վրա է, պարտադիր կազմակերպվում է համապատասխան միջոցառումներ: | Կազմակերպվում են վերոնշյալ թեմաներով սեմինարներ, իրազեկվում են դպրոցում՝ օգտվելով տարբեր հարթակներից: Տեղեկատվություն ստանում են մանկավարժներից, հոգեբանից: Ոչ բոլոր թեմաներով են իրականացվում միջոցառումներ: Ծնողները ևս իրազեկվում են , մասնակցում կանխարգելման միջոցառումներին: Դպրոցում իրականացվում է վերահսկողություն: Իրավունքների իմացությունը պաշտպանիչ դեր ունի: Բռնության, հալածանքի պատճառով այլ դպրոց տեղափոխվող չի եղել: | Դպրոցում չեն իրականացվում համապատասխան միջոցառումներ; Մասնագետների հետ հանդիպումներին կարևորություն չի տրվում : Բռնության դեպքեր նկատվում են և կրկնվում, վերահսկողությունը թույլ է, կանխարգելման ճիշտ միջոցներ չեն ընտրվում: |

## Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի իրազեկվածության գնահատման չափանիշները

| ԳԵՐԱԶԱՆՑ | ԼԱՎ | ՎԱՏ |
|---|---|---|
| Դպրոցի ողջ անձնակազմը լավ տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից, մասնակից են դառնում նախագծերի քննարկումներին, ունենում են առաջարկություններ, արտահայտում են իրենց տեսակետը : | Դպրոցի անձնակազմը մասամբ տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող ակտերից սակայն քննարկումներին ոչ միշտ են մասնակցում, մասնակից են դառնում քիչ թվով աշխատողներ; | Դպրոցի անձնակազմը ոչ բավարար չափով է տեղեկացված դպրոցի գործունեությունը կարգավորող ակտերից, պատկերացում չունի դրանց կարևորության մասին նախագծերի քննարկումներին ընդհանրապես չեն մասնակցում, և դպրոցում իրավական ակտերը կազմվում են առանց հաշվի առնելու աշխատակցի իրազեկվածությունը : |

# Վերահսկողության մեխանիզմները

Հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն դպրոցի զարգացման ծրագիրը տնօրենից պահանջվող հիմնական փաստաթուղթն է: Այն դառնում է տնօրենի գործունեության հիմնական ուղենիշը և արդյունավետության գնահատման չափանիշը: Ծրագրի արդյունավետ և ոչ արդյունավետ կատարելը որոշվում է գնահատման չափանիշներով և վերահսկողության մեխանիզմով: Ծրագրի վերահսկողության իրականացման արդյունավետ միջոցը  դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:
Վեհարսկողությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1. Ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաշվետվություն և ներդպրոցական վերահսկողության պլանների կատարողականների հաշվետվություններ (դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, փոխտնօրենների, դասղեկների, մանկավարժների,մեթոդմիավորումների, հոգեբանի, ուսուցչի օգնականի,):
2. Չիրականացված միջոցառումների պատճառների ուսումնասիրում:
3. Հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան:
4. Բարելավել կրթական ծառայությունների որակը:
5. Ներդպրոցական վերահսկողության հետևողական աշխատանքների կազմակերպում, քննարկումներ:
6. Իրազեկման աշխատանքները , նորարարությունների փոփոխությունների դեպքում դարձնել հասանելի:
7. Շահագրգիռ կողմերի աշխատանքների լուսաբանում , համագործակցության արդյունքների վերլուծություն:
8. Համագործակցություն մեթոդմիավորումների միջև, փոխադարձ դասալսումներ:
9. Համագործակցություն, քննարկումներ վարչատնտեսական մասի համակարգողի , հաշվապահի հետ:
10. Հաշվետվություններ

- Զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության համար մշակված վերահսկողության մեխանիզմները հաստատվում են խորհրդի կողմից:
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը հաստատվում են խորհրդի կողմից:
- Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից յուրաքանչյուր կիսամյակի վերջում /տարեկան 2 անգամ/:

*Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները*

| N | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/գործողութ յան չկատարման կամ մասնակի կատարման դեպքում/պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Զարգացման ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ կառավարման խորհրդի հավանությանն արժանանալու դեպքում:
Զարգացման ծրագրի իրականացման ընթացքը կառավարման խորհրդի կողմից վերահսկվում է ծրագրի հիման վրա կազմված աշխատանքային պլանների , կատարողականների հաստատման միջոցով:
Կառավարման խորհուրդը ,քննարկելով կատարողականները, տնօրենին ապահովվում է խորհրդատվությամբ, աջակցությամբ:

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028թթ դպրոցի զարգացման այս ծրագրում բոլոր դրույթներն իրատեսական են, հաշվի են առնվել դպրոցի հնարավորությունները: Նախատեսված աշխատանքները ոլորտների համար իրագործելի են, քանի որ կա ցանկություն, նպատակ: Այս ամենի արդյունքում կունենանք 21-րդ դարի պահանջներին համահունչ զարգացող դպրոց՝ գրավիչ, ժողովրդավար, ուժեղ թիմով և մրցունակ:

Դպրոցը կհանդիսանա կրթական որակյալ հարթակ, որտեղ սովորողը կլինի.

- Զարգացած
- Հայրենասեր
- Պարտաճանաչ
- Օրինապահ
- Կարողունակ
- Մասնագիտորեն կողմնորոշված
- Մեդիագրագետ